ՀՀաստատված է

ԵՊՀ Գ N 3 նիստում

06.06.2003 թ.

ԵՊՀ ռեկտոր, ԳԽ նախագահ

ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի իրավասության եւ ձեւավորման, աշխատանքի կարգը:

1.2. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը ԵՊՀ կանոնադրության 13 կետի է) ենթակետի հիման վրա հաստատում է ԵՊՀ գիտական խորհուրդը: ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխությունները եւ լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կարգավիճակը եւ կազմը

2.1. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ուսումնամեթոդական (գիտամեթոդական) հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ֆակուլտետում տարվող ուսումնամեթոդական եւ գիտամեթոդական աշխատանքների կատարելագործմանը եւ արդյունավետության բարձրացմանը:

2.2 Մեթոդական խորհուրդը ձեւավորվում է համամասնական սկզբունքով՝ յուրաքանչյուր ամբիոնից մեկական անդամ, որոնք ամբիոնների ներկայացմամբ ընտրվում են ֆակուլտետի խորհրդում:

2.3 Մեթոդական խորհրդի նախագահին դեկանի առաջարկությամբ (բաց քվեարկությամբ) ընտրում է ֆակուլտետի խորհուրդը:

2.4. Ելնելով անհրաժեշտությունից՝ մեթոդական խորհուրդը ռոտացիայի սկզբունքով կարող է փոփոխել կազմը:

3. ՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրները

3.1. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

ա) դասավանդվող առարկաների բովանդակության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչներին եւ գիտական արդի պահանջներին,

բ) ֆակուլտետում իրականացվող մասնագիտությունների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի քննարկումը եւ երաշխավորումը,

գ) նոր եւ հեռանկարային մասնագիտությունների ու մասնագիտացումների առաջարկումը՝ համապատասխան կրթական ծրագրերով,

դ) դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների պատվերի ու դրանց գրախոսության կազմակերպումը,

ե) դասավանդվող առարկաների յուրացման նոր, մատչելի եղանակների առաջարկումն ու իրականացման կազմակերպումը (հեռուսուցման, համակարգչային ցուցադրական մեթոդների կիրառում եւ այլն),

զ) լաբորատոր եւ գործնական աշխատանքների բովանդակային համապատասխանեցումը կարդացվող տեսական դասընթացներին,

է) ընթացիկ, պետական ու ասպիրանտական քննությունների հարցաշարերի քննարկումը եւ երաշխավորումը, մնացորդային գիտելիքների ստուգման հարցաշարերի ձեւավորումը,

ը) ուսումնական պրակտիկաների արդյունավետության բարձրացման ուղիների առաջարկումը,

թ) արտերկրից եկած ուսանողների համար կրթական ծրագրերի մշակումը,

ժ) հետբուհական կրթությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակումը եւ առաջարկումը:

4. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի աշխատակարգը

4.1. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

4.2. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահը գումարում եւ անցկացնում է խորհրդի նիստերը, ղեկավարում է խորհրդի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն ֆակուլտետի խորհրդում եւ այլ օղակներում, ստորագրում է մեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:

4.3. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:

4.4. Իր խնդիրները կատարելիս ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը տալիս է առաջարկություններ կամ լիազորություններ եւ դրանք ներկայացնում է դեկանին կամ ֆակուլտետի խորհրդին:

4.5. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հանձնարարությամբ կատարում է մեթոդական խորհրդի անդամներից մեկը:

4.6. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը իրավունք ունի ֆակուլտետի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից եւ պաշտոնատար անձանցից ստանալ իր խնդիրների եւ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր եւ նյութեր:

4.7. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն իրավասու են խորհրդի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում:

4.8. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի փաստաթղթերը եւ եզրակացությունները հաստատվում են ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

4.9. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի անդամներին իրավունք ունեն խորհրդի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք: